

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի  
հանձնաժողովի  
1998 թ. գործունեության

Երևան - 1999 թ.

## Ներածություն

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, այլ նորմատիվ-իրավական ակտերի հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և 3 անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի 1998թ. մայիսի 28-ի N 55 հրամանագրով, հետևյալ կազմով՝

<i>Վարդան Մովսեսյան</i>	նախագահ
<i>Նիկոլայ Գրիգորյան</i>	նախագահի տեղակալ
<i>Աշոտ Հովսեփյան</i>	հանձնաժողովի անդամ
<i>Էմիլ Աճեմյան</i>	հանձնաժողովի անդամ
<i>Մելս Ավագյան</i>	հանձնաժողովի անդամ

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով՝

- ֆինանսատնտեսական վերլուծության վարչություն
- տեխնիկական փորձաքննության վարչություն
- մեթոդական իրավաբանական վարչություն
- գործերի կառավարչություն

Աշխատակազմի թվաքանակը նախատեսված է 40 մարդ, 1998թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատում են 37 -ը:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն ընթացիկ աշխատանքներն իրականացրել է՝ համաձայն ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ.

գործունեության ծրագրի, հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված «ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի առաջնահերթ աշխատանքների ծրագրի և ժամանակացույցի», ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահի ու ՀՀ էներգետիկայի նախարարի կողմից հաստատված «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի կիրարկմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ժամանակացույցի» և 1998թ. հուլիսի 31-ի № 33 որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. (հուլիս-դեկտեմբեր) նիստերի ժամանակացույցի»:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի հիմնական խնդիրները և իրավասությունները ամրագրված են «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի № 19 և № 20 հոդվածներով:

## **Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. գործունեությունը**

### **1. էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների վերլուծություն**

1998թ. մշակվել և ներդրվել են էներգետիկայի բնագավառի արտադրող, հաղորդող (փոխադրող) և բաշխող տնտեսավարող սուբյեկտների կողմից հանձնաժողով ներկայացվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական տեղեկատվությունների ձևերը:

Ներկայացված հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա կատարվել են տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների պարբերական վերլուծություն և գնահատում հետևյալ հիմնական ուղղություններով.

- գործող սակագների սահմանման ժամանակ կանխատեսված և փաստացի ստացված հասույթի, ըստ ուղղությունների նախատեսված ու փաստացի կատարված ծախսերի և դրանց արդյունավետության գնահատում.

- գործող սակագներով էներգահամակարգի անվտանգ և հուսալի շահագործման ու պահպանման համար անհրաժեշտ նվազագույն հասույթի ապահովման, դրանով իսկ նախատեսված ծախսերի կատարման հնարավորության գնահատում:

Միաժամանակ, 1998թ. կատարվել և ներկայումս շարունակվում են ներդրված ֆինանսական հաշվետվությունների ձևերը միջազգային չափանիշներին աստիճանաբար համապատասխանեցնելու աշխատանքները, նպատակ ունենալով ստեղծել անհրաժեշտ տեղեկատվական դաշտ՝ առավել հիմնավորված սակագնային քաղաքականության իրականացման և գործունեության լիցենզիաներով տնտեսավարող սուբյեկտներին առաջադրվող պայմանների վերահսկման համար:

## 2. Սակագների վերանայում (սահմանում)

1998թ. մշակվել և հաստատվել է էներգետիկայի բնագավառում «Սակագների սահմանման (վերանայման) կարգը», որով կանոնակարգվում է տնտեսավարող սուբյեկտների առաջարկությամբ, ինչպես նաև հանձնաժողովի նախաձեռնությամբ սակագների սահմանման (վերանայման) ընթացակարգը:

Ընդունվել են սակագների վերանայման անհրաժեշտության վերաբերյալ էլեկտրաէներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների համապատասխան հիմնավորումներով առաջարկությունները (հայտերը), կազմակերպվել և անցկացվել են լայն հրապարակային քննարկումներ, այդ թվում նաև՝ արտագնա նիստեր: Քննարկումների արդյունքում՝

հաշվի առնելով գործող սակագների պայմաններում տնտեսավարող սուբյեկտների մոտ ստեղծված ֆինանսատնտեսական ծանր վիճակը,

նկատի ունենալով, որ առաջիկայում շահագործման և պահպանման նվազագույն անհրաժեշտ ծախսերի կատարման համար ֆինանսական

հնարավորությունների անբավարարության դեպքում լրջորեն կվտանգվեն համակարգի հուսալիությունն ու անվտանգությունը,

Ելնելով գործող սակագներն ուժի մեջ մտնելուց հետո (1997թ. սեպտեմբերի 1-ից) տեղի ունեցած զգալի սղաճը հաշվի առնելու անհրաժեշտությունից,

հիմք ընդունելով ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ 1999թ. հունվարի 1-ից ընտանեկան նպաստների համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ քննարկել և լուծել նաև էլեկտրաէներգիայի սակագնի վերանայման պատճառով առավել կարիքավոր ընտանիքների հավելյալ ծախսերի փոխհատուցման խնդիրը,

հանձնաժողովը համապատասխան որոշմամբ վերանայեց սպառողների առանձին խմբերի համար էլեկտրաէներգիայի սակագները, որոնք գործողության մեջ դրվեցին 1999թ. հունվարի 1-ից:

Ելնելով տնտեսավարող սուբյեկտների և սպառողների շահերը հնարավորինս հավասարակշռելու սկզբունքից, հանձնաժողովն ընդունել է սակագների վերանայման հետևյալ մոտեցումները.

- բնակչության համար սահմանել միասնական սակագին, վերացնելով գործող եռաստիճան սանդղակը, նկատի ունենալով, որ ընտանեկան նպաստի համակարգի ներդրմամբ կփոխհատուցվեն առավել կարիքավոր ընտանիքների հավելյալ ծախսերը, միաժամանակ, էականորեն կնվազեն հաշվառման համակարգում նկատվող չարաշահումների հնարավորությունները.
- մյուս բոլոր սպառողների (այդ թվում՝ արդյունաբերություն և կոմունալ տնտեսություն) համար էլեկտրաէներգիայի սակագները թողնել անփոփոխ՝ նպատակ ունենալով բացառել ծառայությունների ու սպառողական ապրանքների գների բարձրացումը ներքին շուկայում, և կանխել սեփական արտադրանքի մրցունակությունը թուլացնող բացասական ազդեցությունը ներքին և արտաքին շուկաներում.

- բարձր լարման սպառողների համար սահմանել գիշերային զեղչ սակագին՝ նպատակ ունենալով բարենպաստ պայմաններ ստեղծել տնտեսության զարգացման համար և, միաժամանակ, էլեկտրակայանների բեռի գրաֆիկի հարթեցման ճանապարհով բարձրացնել համակարգի գործունեության արդյունավետությունը:
- անփոփոխ պահել ինչպես բնակչությանը, այնպես էլ այլ սպառողներին նատակարավոր գազի սակագները (դրամի զգալի արժեզրկման պայմաններում), նպատակ ունենալով առաջին հերթին կանխել ջերմաէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագնի էլ ավելի բարձրացումը:

Հաշվետու տարում իրականացվել են հանրապետության 1999թ. էներգետիկական հաշվեկշռի կանխատեսման աշխատանքներ, որոնց հիման վրա ձևավորվել և սահմանվել են էլեկտրաէներգիայի առաքման (արտադրության) քվոտաներ՝ ելնելով սպառողների համար հնարավորինս նվազագույն սակագնի ձևավորման սկզբունքից և համակարգի անվտանգության ու հուսալիության հետ կապված պարտադիր սահմանափակումներից: Սահմանված քվոտաները տնտեսավարող սուբյեկտների համար հիմք են ծառայել սակագների վերանայման վերաբերյալ իրենց առաջարկությունների մշակման համար:

Համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել և ներկայումս շարունակվում են աշխատանքները բնակչության և ցածր լարման մյուս սպառողների համար գիշերային զեղչ սակագնի սահմանման տնտեսական հիմնավորվածության գնահատման ուղղությամբ:

Շարունակվում են աշխատանքները սակագնի հաշվարկման մեթոդիկայի կատարելագործման և միջազգային չափանիշներին աստիճանաբար համապատասխանեցման ուղղությամբ:

### **3. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորում**

Ուսումնասիրելով մի շարք երկրների (այդ թվում նաև՝ ԱՊՀ անդամ) փորձը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ ու «Էներգետիկայի մասին» ՀՀ

օրենքի դրույթներով, մշակվել և գործնականում կիրարկվում են լիցենզավորման գործընթացը կանոնակարգող մի շարք նորմատիվ ակտեր, որոնցից կարևորներն են՝

- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, որով սահմանվում են այս բնագավառում գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ձևերը և դրանց ներկայացվող պահանջները, դիմումի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրման (մերժման), ինչպես նաև լիցենզիայի կասեցման և լիցենզիայից զրկման ընթացակարգերը.
- Էլեկտրաէներգիայի (իզոլյուցիայի) արտադրության և բաշխման, ջերմային էներգիայի արտադրության, տեղափոխման և բաշխման, բնական գազի փոխադրման և բաշխման լիցենզիաների օրինակելի ձևերը և լիցենզիաներով սահմանվող գործունեությունների իրականացման հիմնական պայմանները.
- Գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգը, որով սահմանվում են էներգետիկայի բնագավառում էլեկտրակայաններ կառուցող և արտադրական շինարարություն իրականացնող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողով ֆինանսական երաշխիքներ ներկայացնելու ընթացակարգը և ձևը.
- «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում տնտեսավարող սուբյեկտների գործունեության լիցենզավորման ժամանակացույցը», համաձայն որի 1998թ. հոկտեմբերի 25-ից սկսվել են տնտեսավարող սուբյեկտների հայտերի ընդունումն ու քննարկումը :

Մշակվել և քննարկման են ներկայացվել էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի հաղորդման, կարգավարական ծառայության իրականացման, էլեկտրական կայանների կառուցման, արտադրական շինարարության գործունեության լիցենզիաների օրինակելի

ծևերը և լիցենզիաներով սահմանվող գործունեությունների իրականացման հիմնական պայմանները:

#### 4. Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների, նրանց և սպառողների միջև փոխհարաբերությունների կարգավորում

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջև, ինչպես նաև նրանց ու սպառողների միջև առևտրային փոխհարաբերությունների կարգավորման նպատակով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից մշակվել և կիրառվում են էլեկտրական, ջերմային էներգիայի, բնական գազի առքուվաճառքի պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնք հնարավորություն են ընձեռում հավասարակշռել կողմերի իրավունքներն ու պատասխանատվությունը:

Մշակվել և քննարկման են ներկայացվել էլեկտրաէներգիա արտադրող, հաղորդող և բաշխող կենտրոնական կարգավարական ծառայություն իրականացնող ընկերությունների միջև փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև առաջացած տարաձայնությունների վերաբերյալ դիմումների ընդունման, քննարկման և լուծման կարգը:

1998թ. ընթացքում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից գրանցվել են տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերը, որը հնարավորություն է տվել հսկել այդ գործընթացը և ապահովել պայմանագրերի համապատասխանությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նորմատիվ- իրավական ակտերին և օրինակելի ձևերին:

Նախապատրաստվել և քննարկման է ներկայացվել էներգամատակարարող ընկերության կողմից էներգամատակարարման դադարեցման մասին տեղեկացնելու վերաբերյալ որոշման նախագիծը:

#### 5. Համագործակցությունը պետական և այլ օրենսդիր մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ



Համագործակցելով պետական կառավարման մարմինների հետ, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը 1998թ. ընթացքում քննարկել և դիտողություններ ու առաջարկություններ է ներկայացրել նրանց կողմից նախապատրաստված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ:

Ելնելով տնտեսավարող սուբյեկտների և սպառողների հարցադրումների քննարկման արդյունքներից, հանձնաժողովը առաջարկություններ է ներկայացրել նաև ՀՀ կառավարության որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ, մասնավորապես, ՀՀ կառավարության 1998թ. հունվարի 16-ի N 14 որոշմամբ հաստատված «Էլեկտրաէներգիայից օգտվելու կանոններ»-ում, նպատակ ունենալով վերացնել նրանում առկա անհամապատասխանությունները «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին:

Միաժամանակ, հանձնաժողովն իր կողմից մշակված նորմատիվ փաստաթղթերի նախագծերը ներկայացրել է բոլոր շահագրգիռ պետական մարմիններ ու կազմակերպություններ և ստացել համապատասխան կարծիքներ ու առաջարկություններ:

Հանձնաժողովը մասնակցել է պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված և իր գործունեության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին ու սեմինարներին:

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, 1998թ. սեպտեմբերին նախապատրաստվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1999թ. գործունեության ծրագիրը:

## **6. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

Էներգետիկայի բնագավառում ներդրումների խթանման, ներդրողների համար համապատասխան երաշխիքների ապահովման, ինչպես նաև իրականացվող կառուցվածքային բարեփոխումներին աջակցման

նպատակով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը հաշվետու տարում բանակցել է Համաշխարհային բանկի, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID), Hagler-Bailly խորհրդատվական և Ben Shahar Associates ընկերությունների, IFC և H.E.Warner ֆինանսական կորպորացիաների ներկայացուցիչների, ինչպես նաև մասնավոր մի շարք ընկերությունների և անհատ ձեռներեցների հետ:

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին ցուցաբերվող տեխնիկական օգնության շրջանակներում Hagler-Bailly ընկերությունը, սերտ համագործակցելով Հանձնաժողովի հետ, մշակել և շահագրգիռ պետական մարմիններ ու էներգետիկայի բնագավառի ընկերություններ է ներկայացրել էլեկտրական էներգիայի շուկայի կազմավորման հայեցակարգը, բնական գազի փոխադրման և բաշխման սակագների հաշվարկման մեթոդաբանության և էներգետիկայի բնագավառում իրականացվող բարեփոխումների խթանմանն ուղղված այլ փաստաթղթեր:

Հաշվետու տարում Hagler-Bailly ընկերությունը բազմաբնույթ խորհրդատվական ծառայություններ է մատուցել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին, կատարել հանձնաժողովի կողմից մշակված մի շարք նորմատիվ-իրավական բնույթի փաստաթղթերի փորձաքննություն:

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության հովանավորությամբ 1998թ. հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են Բուդապեշտ և Վարշավա քաղաքներում կայացած հասարակական ծառայությունների կարգավորման միջազգային գիտաժողովներին, որտեղ նրանց ելույթները և ներկայացրած նորմատիվ-իրավական բնույթի փաստաթղթերն արժանացել են միջազգային փորձագետների բարձր գնահատականին:

Էներգետիկայի բնագավառի կարգավորման ԱՄՆ-ի փորձն ուսումնասիրելու նպատակով ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության միջոցներով Hagler-Bailly ընկերության և ԱՄՆ-ի

էներգետիկ ասոցիացիայի (USEA) կողմից Երևանում և ԱՄՆ-ում (Քենտուկի նահանգ) կազմակերպվել են մի շարք սեմինարներ, որոնց մասնակցել են հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները:

Հանձնաժողովը հաստատել և հաշվետու տարում զարգացրել է իր գործնական կապերը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների, Հունգարիայի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Լիտվայի, Մոլդովայի, կարգավորող հանձնաժողովների և այլ միջազգային կազմակերպությունների հետ:

## 7. Սպառողների հետ տարվող աշխատանքներ

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը սպառողների հետ աշխատանքները կանոնակարգելու նպատակով մշակել և հաստատել է «ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ուղղված սպառողների հարցադրումների և բողոքների ընդունման, քննարկման և որոշում կայացնելու մասին» կարգը:

Սպառողների շուրջ 80 հարցադրումներին և բողոքներին (50-ը՝ բնակչությունից, 30-ը կազմակերպություններից) տրվել են օպերատիվ պարզաբանումներ և համապատասխան լուծումներ: Բողոքների և հարցադրումների գերակշիռ մասը վերաբերվում է էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (20), էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերի տեսանելիության բացակայության (18), ենթաբաժանորդի կարգավիճակի հստակեցման (10), սակագների ոչ ճիշտ կիրառման հարցերին և հաշվիչների սխալ ցուցմունքների առնչությամբ առաջացած տարաձայնություններին (23):

Բողոքներում բարձրացված այն հարցերի կապակցությամբ, որոնց լուծումը պահանջել է փոփոխություններ կատարել այլ գերատեսչական նորմատիվ-իրավական ակտերում, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարություն:

## **8. Էներգետիկայի հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը**

Էներգետիկայի հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունն ապահովելու նպատակով՝

Հանձնաժողովի կողմից 1998թ. ընդունված որոշումները և նորմատիվ ակտերը հրապարակվել են «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում».

1998թ. ապրիլ ամսին մամուլում հրապարակվել է հանձնաժողովի 1997թ. գործունեության հաշվետվությունը.

հանձնաժողովի անդամները հանդես են եկել մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անց են կացվել խորհրդակցություններ, մամուլի ասուլիսներ, ճեպագրույցներ, որոնց ժամանակ սպառիչ պարզաբանումներ են տրվել հանձնաժողովի գործունեությանն առնչվող բոլոր հարցերին:

Հանձնաժողովի նիստերը (այդ թվում՝ արտագնա) անցկացվել են դռնբաց, որոնց մասնակցել են շահագրգիռ, պետական, հասարակական կազմակերպությունների, լրատվական միջոցների և հասարակայնության ներկայացուցիչներ:

## **9. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվությունը**

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը 1998թ. ֆինանսավորվել է ՀՀ պետբյուջեի, կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական աջակցության վարկի (SATAC) և ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության տեխնիկական օգնության միջոցներից:

ՀՀ պետբյուջեից հատկացված միջոցների ծախսերն ըստ հոդվածների ներկայացված են հետևյալ աղյուսակում.

N-	Հողվածի համարը	Ծախսի անվանումը	Նախահաշվով նախատեսված է (հազ.դրամ)	Հատկացված է բյուջեից (հազ.դրամ)	Փաստացի ծախսը (հազ.դրամ)
1.	01	Աշխատավարձ	42855.3	42855.3	42855.3
2.	02	Աշխատավարձի վրա եկ	13713.7	7715.5	5363.4
3.	03	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	2168.0	1318.0	1318.0
4.	031	Շենքի վարձակալման վճար	9800.0	8675.0	8675.0
5.	04	Գործուղման ծախսեր	6000.0	2216.0	2016.0
6.	05	Կապի ծառայությունների ծախսեր	2463.7	1892.7	1892.7
7.	06	Էլեկտրաէներգիայի ծախսեր	1200.0	1566.5	1378.6
8.	11	Ջրի ծախսեր	60.0	27.0	27.0
9.	12	Գույքի և սարքավորման ծախսեր	1400.0	1375.0	1375.0
10.	13	Տրանսպորտային ծախսեր	5580.0	4880.0	4880.0
11.	18	Ներկայացուցչական ծախսեր	350.0	183.5	183.5
		<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>85590.7</b>	<b>72704.5</b>	<b>69964.5</b>

Ծանոթություն. 2,4,6 հոդվածներով հատկացված և փաստացի ծախսերի տարբերությունը կազմում է 2740.0 դրամ, որը մնացորդն է գանձապետարանի բանկային հաշվում:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական աջակցության վարկային ծրագրի միջոցներից 1998թ. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին հատկացվել է 514,0 հազ.դրամ, իսկ նախորդ տարվա հատկացումներից մնացորդը կազմել է 789,7 հազ.դրամ: 1998թ. փետրվարի 1-ից մինչև 1999թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակաշրջանում այդ միջոցներից ծախսվել է 1299,3 հազ.դրամ, որով ֆինանսավորվել են սեմինարների կազմակերպման

(108,0), հաղորդակցման (931,3) և հրատարակչական (260,0) ծախսերը: Մնացորդը 1999թ. փետրվարի 1-ի դրությամբ կազմել է 4,4 հազ.դրամ:

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը, որպես տեխնիկական օգնություն, 1998թ. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի համար ձեռք է բերել համակարգչային տեխնիկա, սարքավորումներ, գույք, ինչպես նաև վճարել է համակարգչային ներքին ցանցի տեղակայման և էլեկտրոնային փոստի միացման աշխատանքների համար: Տեխնիկական օգնության ընդհանուր գումարը կազմել է 35487,677 հազ. դրամ: